21172

374
h-16

1923

2 010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

557

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ

№ 10 ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ **№ 10**

ՔԱՂԼՈՒՍՎԱՐԻՉՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

(27—31 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1923 Թ.)

ԵԵՐԵՎԱՆ

ՊԵՏՔՀՐԱՏ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

1923

374
Բ-16

12002

374
Հ-16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

300
1667-ՔԱ

Գրալեռարձեր բոլոր յերկրների, միացեք

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ

№ 10 ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ **№ 10**

D03
(9503)

ՔԱՂԼՈՒՍԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

(27—31 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1923 Թ.)

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
7/XI-1922
Ереван, Мясникяна
Ս. ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԵՐԵՎԱՆ
ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
1923

9995

35451-

18537-59

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ

Դեկտեմբերի 27-31-ին տեղի ունեցած Քաղլուսվարիչների առաջին Համահայկական Կոնֆերանսը յեկավ Քաղլուս աշխատանքի նոր հնարավորություններ և նոր ուղիներ ընդգծելու։ Կոնֆերանսը կրում եր դաստնթացների բնույթ և աշխատանքի խոշոր մասը կատարվում եր սեկցիաներում։ Այդ իսկ պատճառով նրա հանած վորոշումները կենսական են և կյանքում կիրառելի։

Հնարավորություն չունենալով կոնֆերանսը անել լայն մասշտաբով և մեծ քանակությամբ քաղլուսվարիչների ներկայությամբ բոլոր գավառներից, Քաղլուսգլխավարը հատուկ ժողովածուով բաց թողնելով կոնֆերանսի վորոշումները՝ ցանկանում և բավարարել այդ բացը։

«Ակումբային Ուղեցույցի» հետ ներկա բյուլլետենը անշուշտ կը բավարարի այն զեկավարման և հրահանգչական պահանջը, վոր ունեն տեղերը և այսպիսով խոշոր չափով կառաջացնեն մեր ընդհանուր քաղլուսաշխատանքը։

Գլխավոր խմբագիր

ՔԱՂԼՈՒՍՎԱՐԻԶՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՈՐԱԿԱՐԳԸ

1. Քաղլուսգլխվարի գործունեության համառոտ զեկուցում . . . . . ընկ. Դ. Դգնունի

2. Ագիտպրոպ աշխատանքը քաղլուսհիմնարկներում. . . . . ընկ. Ղուլի-Զյանովյան

3. Արտադպրոցական աշխատանքը Լուսժողկոմատի ընդհանուր սիստեմի մեջ . . . . . ընկ. Մառվյան

4. Կազմակերպչական ֆինանսական սեկցիա. ընկ. Դգնունի

5. Անգրագիտության և կիսագրագիտության վերացման սեկցիա. . . . . ընկ. Խեչումյան

6. Ծրագրային մեթոդական սեկցիա. . . . ընկ. Ավրահամյան

7. Երգիչ-ընթերցարանների » . . . . ընկ. Քաջազյան

8. Ակումբային . . . . . » . . . . ընկ. Խաչատրյան

9. Գրադարանային . . . . » . . . . ընկ. Թաքիանոյան

10. Գեղարվեստական ագիտացիայի սեկցիա. . ընկ. Դանիելյան

ԲԱՆԱՁԵՎ ԸՆԿ. ԸՆԿ. ՂՈՒԼԻ-ԶՅԱՆՈՎՅԱՆԻ ՏԵՍ. ՄՈՒԱՎՅԱՆԻ ԶԵԿՈՒՅՑՈՒՄՆԵՐԻ ԱՌԹԻՎ

1. Քաղլուսվարին և տեղերում քաղլուսվարների հիմնական խնդիրներից մեկը պետք է համարել աշխատանքի ասպարեզում հաստատակամության դալը, սերտ փոխհարաբերությունը և համագործակցությունն այն հիմնարկությունների հետ, որոնք տանում են քաղլուսվարական և կուլտ-կրթական աշխատանք։ Անհրաժեշտ է անհապաղ անցնել այդ խնդիրների լուծմանը և այդ միջոցով պայմաններ ստեղծել, հետագայում խուսափելու աշխատանքի անցանկալի զուգընթացությունից և էներգիայի ու ուժի վոչ ըստ ցիոնալ վատնումից, վոր հատկապես ուժեղ բացասական ազդեցություն է ունենում պատրաստված աշխատակիցների կադրի բացակայության պատճառով։ Այդ նպատակով անհրաժեշտ է ուժեղացնել նաև Կենտկոմի Ագիտ. բաժնին կից ագիտ. կոլեգիայի աշխատանքը, վոր պետք է ընդգրկե կուլտ-կրթական և քաղլուսվարական աշխատանքը, տա ընդհանուր ուղղություն այդ աշխատանքին և լուծի նրա հերթական բոլոր խնդիրները։

2. Քաղլուսվարը վորպես Կենտկոմի Ագիտ-Բաժնի գործող ապպարատ և պետական պրոպագանդայի որգան, առաջին հերթին իր աշխատանքի ծանրության կենտրոնը պետք է դարձնի օբյեկտիվ նախադրյալների ստեղծումը, հետագայում հաջող անցկացնելու համար իր հիմնական աշխատանքը։ Այդ նպատակին հասնելու համար Քաղլուսգլխվարի աշխատանքի կենտրոնում պետք է դրված լինի չափահաս աշխատավորության այբբենական անգրագիտության վերացումը։

Ըստ վորում այբբենական անգրագիտության վերացումը պետք է դուգակցվի ռուսերենի քաղգրագիտության ելեմենտար հասկացողությունների յուրացմանը։

3. Մեր Ագիտ-պրոպագանդիստական և կուլտ-կրթական աշխատանքի գլխավոր պակասությունը հանդիսանում է մեթոդական ձևերի ու մոտեցումների բացը, վորը հնարավորություն է տալու ժասսաններին տեղական խնդիրները հասկանալու և գործադրելու կյանքում։ Անհրաժեշտ է առաջիկայում հիմնովին արմատախիլ անել աշխատանքի մեթոդներից այդ հիմնական դեֆեկտը, մեծ ուշադրություն դարձնել այդ աշխատանքին կոնկրետ բովանդակություն տալու վրա՝ և ի նկատի ունենալով ազգաբնակչության կուլտ-կրթական մակարդակն ու պայմանները. ստիպողական պահանջ և հատկապես առանձնացնել և խորացնել տնտեսական-արտադրական պրոպագանդան՝ զեկավարվելով սոցիալիստական շինարարության խնդիրների լուծման անցողիկ շրջանի գծերով և մեթոդներով.

4. Քաղլուսավարական աշխատանքների գլխավոր խնդիրների շարքում պետք է տեղ տալ և հակակրոնական պրոպանդային։ Աշխատավոր ազգաբնակության կուլտուրական մակարդակի զարգացման հետագա առաջադիմությունում պայմաններն ի նկատի ունենալով՝ հարվածային խնդիր պետք է համարել անոտիապաշտության և նախապաշարմունքների դեմ պայքարելը, վորոնք մթագնում են մասսայի գիտակցությունը։ Պլանմեր է հաջորդական աշխատանքն այդ ասպարեզում պետք է հենվի աշխատավոր ժողովրդի մեջ բնական գիտությունների տարածման վրա, լայն ոգտագործելով տեխնիկայի նվաճումներն ու կիրառումը։

Ղեկավարվելով ընդհանուր սկզբունքային խնդիրներով՝ գործնական աշխատանքների ժամանակ պետք է լինել չափազանց զգույշ, հաշվի առնել կուլտուրական մակարդակը, սպեցիֆիկ պայմանները, պատմականորեն ժառանգություն մնացած տրադիցիաները և այլն։

5. Գեղարվեստական ագիտացիայի և պրոպագանդայի կանոնավոր կիրառումը ուժեղացումը առաջնակարգ նշանակություն ունի, նամանավանդ յեթե ինկատի ունենանք Խորհրդային Հայաստանի ազգաբնակության գերակշռող սոցիալական խավը՝ գյուղացիությունը, վորը մտածում է պատկերներով և առարկայորեն։ Այս ասպարեզում հատկապես պետք է շեշտել հասկանալի, հետևաբար և աշխատավորությանը դաստիարակել կարողացող պլեխանովի բացը, վոր կործանարար կերպով և անդրադառնում այդ աշխատանքի վրա, գյուղական թատրոններում բեմադրվող դրամատիկական պիեսների մեծամասնությունը գեղարվեստական վոչ մի արժեք չունեն. չի դաստիարակում, այլ այլասերում է ու փչացնում գիտողին։ Անհրաժեշտ է յերևան հանել մաքսիմում եներգիա արդյունավետ դարձնելու համար դաստիարակչական գործի այդ եական ճյուղերից մեկը՝ ուժերի լարումով հնարավորություններ ստեղծելով, գյուղական բեմերը կարգավորելով, բարձրացնելով ցուցադրվող պիեսների վորակը և հրապարակ քաշելով ու գործի դնելով այն ուժերին, վորոնք զբաղվում են Ճոր ու հաճրամաչէրի դրամատուրգյա ստեղծելով Խորհրդային Հայաստանում։

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳԿՅՈՒԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Քաղլուսավարների առաջին համագումարից հետո, նախահաշվային և շտատների նորանոր կրճատումները ստիպեցին կյանքում չկիրառել այն ապպարատը, ինչ նախատեսվում եր, և խոշոր չափով աշխատանքի շրջանակը նեղացնել։

Անդրկենտրոնի ապրիլի 2-ի դեկրետի համաձայն բոլոր քաղլուսհիմնարկները անցնում են տեղական մատակարարման։ Այդ հանգամանքը ստիպեց մեզ բյուջեական հանձնաժողովին Գավգործկոմների նախագահների քննության ժամանակ ամեն կերպ պաշտպանել և մտցնել վորոշ գումարներ, ինչ և հաջողվեց մեզ անել։ Սակայն գավգործկոմները հիշյալ գումարները չեն տրամադրում ամբողջովին Գավքաղլուսվարներին, իսկ մի քանիսը բոլորովին հրաժարվում նյութական վորևե ոժանդակություն ցույց տալուց։

Համապատասխան մարմինների նախնական վորոշմամբ Հ.Կ.Կ. Կենտկոմի և Ժողկոմխորհի գումարներից ևս պետք է բաց թողնվեր լրացուցիչ կերպով 28.000 ր., վորը պիտի բաշխվեր ըստ գավառների. ինչ-ինչ պատճառներով մինչև որս այդ գումարը չի ստացվել բոլորովին։

Այսպիսով ֆինանսական բազա ստեղծելու հարցը քաղլուսաշխատանքի գոյության նախապայմանն է. հարցին պետք է տալ վորոշ և վերջնական լուծում։

Կազմակերպչական հարցի ասպարեզում անհրաժեշտ և ավելի սերտ կապ հաստատել գավքաղլուսվարների հետ, ձգտել և իրագործել գավառներում (վոր դեռ չկան այդպիսիները) հատուկ քաղլուսվարիչներ ունենալու խնդիրը։ Միաժամանակ կենտրոնի ղեկավարությունը տեղերի աշխատանքներին բավարարվում է լոկ գրավոր կապով. անհրաժեշտ է ուժեղացնել կենդանի կապը՝ հրահանգիչների և բաժինների վարիչների գավառ հաճախակի գործացման միջոցով։

Վորպեսզի հնարավոր լինի առաջիկայում կանոնավորել, ուժեղացնել և հունի մեջ դնել քաղլուսաշխանքը՝ կոնֆերանսն անհրաժեշտ է գտնում ընդունել կազմակերպչական և ֆինանսական աշխատանքների ասպարեզում հետևյալ վորոշումները։

1. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ

Կենտրոնի և գավառների շտատների հարցին անցնելով՝ կոնֆերանսը գտնում է, վոր՝

ա. Անհրաժեշտ է Հ.Կ.Կ.Կ. Կոմիտեի կողմից հրատարակել մի հրահանգ, վորի համաձայն քաղլուսաշխատակիցները ազատվում են իրենց աշխատանքին և շուտ-շուտ փոփոխության չպետք է յենթարկվեն։

բ. Քաղլուսվարիչներին համարել պատասխանատու աշխատակիցներ և խնդրել Հ.Կ.Կ.Կ. Կոմիտեին համապատասխան շրջաբերական ուղղել գավկոմներին, վոր պատասխանատու ընկերների հանձնարարեն քաղլուսաշխատանքը։

գ. Կենտգործկոմի կողմից հրատարակել համապատասխան հրահանգ, վորի համաձայն բյուջետային հանձնաժողովի կոմից հաստատված ցանցի հիմնարկների համար ունենալ հատուկ վճարովի վարիչներ։

դ. Կոնֆերանսը ցանկալի է համարում վորոշ խոշոր գավառներում (Յերևան, Ալեքսանդրապոլ, Լոռի-Փամբակ. Եջմիածին և Դիլիջան) ունենալ հատուկ հրահանգիչներ և լիկվիդատորներ աշխատանքի ինտենսիվության համար։

յե. Անհրաժեշտ է լրացնել կենտրոնի յեղած շտատները և անպայման ունենալ գրադարանային յե/բ. հատուկ վարիչ։

Ջ. Քաղլուսավարի փոխհարաբերությունը Ագիտ բաժնի, Լուսբաժնի, պրոֆմիությունների, ԿՑԵՄ, Միլիցիայի և Կարմիր Բանակի հետ։

ա. Քաղլուսավարները տեղերում և կենտրոնում ունում են Լուսբաժինների և Լուսժողկոմատի բաժինները և նրանք տանում են համապատասխան հիմնարկների հետ միացյալ աշխատանք և նկատի ունենալով, որ լուսբաժինների կողմից անհրաժեշտ ղեկավարություն ցույց չի տրվել, հարկավոր է անպայման ղեկավարությունն ուժեղացնել։

բ. Քաղլուսավարը համարելով կուսկոմի ագիտբաժնի գործող ապպարատը՝ կոնֆերանսը անհրաժեշտ է գտնում ուժեղացնել ագիտ բաժնի ծրագրային և գիրեկտիվային ղեկավարումը։

գ. Ցանկանալով կանոնավորել քաղլուսավարի Արհմխորհի կուլտբաժնի քաղլուս աշխատանքին փոխհարաբերությունը՝ կոնֆերանսն անհրաժեշտ է գտնում վորպես հիմք ընդունել Ռուսաստանի քաղլուսավարի և Արհմխորհի կլուտբաժնի միջև կնքված պայմանագիրը։

դ. Կոնֆերանսը հաստատում է քաղլուսավարի և ԿՑԵՄ. փոխհարաբերության համաձայնագիրը։

յե. Քանի վոր Միլիցիայի քաղքարտուղարությունը վերացված է, կապ պահպանել Միլիցիայի քաղլուսաշխատանքի ասպարիզում ագիտբաժնի կողմից առաջադրված ընկերոջ հետ և ղեկավարել աշխատանքը, իսկ տեղերում քաղլուսավարիչները կապ են պահպանում գավկոմի կողմից միլիցիային ամրացված ընկերոջ հետ։

զ. Անհրաժեշտ է Միլիցիայի հետ կնքել հատուկ և մանրամասն պայմանագիր։ Աշխատանքը հարմարեցնել խորհուրդների միության հետ։

3. ԳԱՎՔԱՂԼՈՒՍԱՎԱՐՆԵՐԻ ԿՆՏԵՍՐՈՆԻ ՅԵՎ ՄԱՍՍԱՆԵՐԻ ԿԱՊԸ

ա. Կոնֆերանսն անհրաժեշտ է գտնում կենդանի կապն ուժեղացնել և առնվազն տարին 2 անգամ յուրաքանչյուր գավառ հրահանգիչ ուղարկել։

բ. Կազմակերպել քաղլուսավարիչների խորհրդակցություններ տարին 3 անգամ, փետրվար ամսին հրավիրել քաղլուսավարիչների համագումար և ընդունել առաջին քաղլուսավարիչների հրավիրումը կենտրոն վորոշ խնդիրների պարզման համար։

4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԻՆՖՈՐՄԱՑԻԱ

ա. Անհրաժեշտ է մինչև հաջորդ ամսի 5 ներկայացնել քաղլուսդպիրներին ամսական զեկուցում գավքաղլուսավարի գործունեության մասին։

բ. Կենտրոնը զեկուցումներին հրահանգչական նամակներով պետք է պատասխանի։

գ. Տեղերի փորձերի ուսումնասիրությունն ու կենտրոնի կարծիքը դրա մասին ուղարկել բոլոր գավառներին ամեն ամիս։

դ. Հաշվեառման և ստատիստիկայի աշխատանքներն ուժեղացնել գավառներն ուղարկելով հաշվեառման մանրամասն ձևեր։

5. ԿԵՆՏՐՈՆԻ ՅԵՎ ԳԱՎԱՌՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՀԱՐՑԸ

ա. Կոնֆերանսն անհրաժեշտ է գտնում խիստ կերպով կիրառել պահանջը Հ. Կ. Կ. Կ. Կ. և Ցեկոմ. Կ. Կ. Ագիտ բաժինների ու Քաղլուսդպիրների կողմից ուղարկված ու մշակված։

6. ՔԱՂԼՈՒՍՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՀԱՄՏԵՍՈՒՆ ՑԱՆՑ

ա. Ունենալ հաստատուն ցանց քաղլուսհիմնարկների և խնդրել ժողկոմխորհից համապատասխան դեկրետ այդ մասին։

բ. Ունենալ 25 ակումբ։

Լիկկայան 400 և զինակոչների համար 200.

Խրճիթ-ընթերցարան— 200.

Գրադարան— 20.

Թատրոն— 35.

Կինոազրադետների դպրոց 100 և նախզինակոչ կինոազրադետների համար 50 դպրոց.

Հասակավորների բարձր տիպի դպրոց 5 հատ.

7. ԱՇԽԱՏԱՆՔԸ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ

ա. Առանձին ուշադրություն դարձնել ազգային փոքրամասնությունների անգրագիտության վերացմանը.

բ. Բանալ 30 խրճիթ-ընթերցարան թյուրք և 15 ռուս ազգաբնակության մեջ ու 3 խրճիթ-ընթերցարան ասորիների համար։

գ. Քաղլուսդպիրները պետք է աշխատի ձևով բերել ազգային փոքրամասնությունների համար համապատասխան լեզվով գրքեր։

դ. Քաղլուսդպիրների հրատարակությունների մի մասը թարգմանել ազգային փոքրամասնությունների լեզվով։

յե. Ընդլայնել թատրոնական ցանցը։

զ. Ազգփոքրխորհրդի հրահանգիչներին ոգտագործել քաղլուսաշխատանքի համար։

II ՖԻՆԱՆՍԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ

1. Հանրապետական միջոցներ.

ա. Կոնֆերանսը գտնում է, որ Քաղլուսդպիրների նախահաշիվը պետք է կազմի Լուսժողկոմատի ընդհանուր նախահաշվի 10%-ը։

բ. Ի նկատի ունենալով մի կողմից Լուսժողկոմատի սուղ միջոցները. մյուս կողմից այն խոշոր խնդիրները, որ դրվում են քաղլուսավարի առաջ Լուսժողկոմի, Հ. Կ. Կ. Կ. Կոմիտեյի, Անդրյերկոմի կողմից՝ կոնֆերանսը անհրաժեշտ է գտնում միջնորդել Ժողկոմխորհի առաջ ուժանդակ զումարքաց թողնելու նախզինակոչների անգրագիտության վերացման համար։

գ. Միջնորդել համապատասխան հիմնարկների առաջ գրառեպ-գլխավորի ամբողջ յեկամուտները արամադրել քաղլուսաշխատանքին։

գ. Միջոցներ ձեռք առնել մեղ մոտ յեվս կոոպերացիայի հետ համաձայնություն կայացնելու Ռոսատոմի որինակով նրա մուտքերից 1/2%-ը քաղլուսաշխատանքին հատկացնելու մասին։

2. Ի նկատի ունենալով, որ Անդրկենտգործկոմի ապրիլի 2-ի զեկրետի համաձայն տեղական քաղլուս հիմնարկներն անցնում են տեղական միջոցներին, իսկ գավգործկոմները չեն բաց թողնում հաճախ վորոշ անհրաժեշտ գումարներ, մշակել և հաստատել Կենտգործկոմում հաստատուն ցանց և իրականացնել դա կյանքում։

3. Կոնֆերանսը խրախուսելով Քաղլուսգլխավարի քայլը անգրագիտության վերացմանը նպաստող ընկերության հիմնելը՝ անհրաժեշտ և գտնում ընդլայնելով ցանցը գավառական կենտրոններում ևս հիմնել նման ընկերություններ։

բ. Ի նկատի ունենալով քաղլուսաշխատանքների հաշվի դրած թե կենտրոնի և թե տեղերի միջոցների պակասությունը՝ կոնֆերենցիան անհրաժեշտ է գտնում, վոր քաղլուսավարները կազմակերպեն արտադրական հիմնարկներ (կինո, զբոսավայր, թատրոն և այլն)։

գ. Անհրաժեշտ համարել գոյություն ունեցող ներկայումս քաղլուս բնույթ կրող բոլոր արտադրական հիմնարկները հանձնել քաղլուսավարներին։

4. Չի տատանվում Պրոֆմիության և Կարմիր բանակայինների հիմնարկների վրա. նախահաշիվային բոլոր սեղմումներից ու կործանարար կրճատումների հետևանքներից ազատվելու, մասսայական քաղլուսհիմնարկների ցանցը ընդլայնելու և հաստատուն դարձնելու նպատակով՝ կոնֆերանսը գտնում է անհրաժեշտ աշխատանքը դնել նոր ուղիների վրա, դարձնելով մասսայական քաղլուսհիմնարկը (լիկկայան, խրճիթ-ընթերցարան և այլն) գյուղական համայնքի տնորինության և պահպանման։ Համապատասխան ագիտացիոն աշխատանքի գյուղերում խրճիթ-ընթերցարանին վորոշ քանակությամբ հողամաս հատկացնելու, վերջինիս գոյության մեջ գյուղացուն շահագրգռելու նկատմամբ պետք է անմիջապես անցնեն քաղլուսավարները՝ ոգտագործելով կուսակցության և յերիտկոմմիության ուժերը։ Խրճիթ-ընթերցարանի և լիկկայանի մասսայականացումը միակ փերկությունն է քաղլուսաշխատանքի նյութական ապահովման գործում։

5. ա. Խնդրել Քաղլուսգլխավարին պարզել քաղլուսհիմնարկների ծախսերը և մանրամասն հրահանգել տնտեսական քաղլուսհիմնարկների նախահաշիվները կազմելու մասին։

բ. Կոնֆերենցիան անհրաժեշտ է գտնում, վոր գավքաղլուսավարները նախահաշիվներին ամենալուրջ ուշադրություն դարձնեն, վոր հետագայում ևս կատարվի նույն պատկերն ու դրությունը, ինչ վոր անցյալում։

6. ա Քաղլուսհիմնարկների տնտեսական և նյութական մատակարարումն ամբողջովին անցնում է տեղերին, բայց ի նկատի ունենալով, վոր առայժմ դրանք թույլ են կազմակերպչորեն և լիովին հնարավորություն չունեն նոր գրականությամբ լրացնելու ու թարմացնելու յեղանակը՝ Քաղլուսգլխավարը պետք է աշխատի միջոցներ գտնել, գոնե ժամանակավորապես, տեղերիս ոգնելու գրականությամբ և ձեռնարկներով։

ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿԻՍԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ՍԵԿՏՅԻԱՅԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Անգրագիտության և կիսագրագիտության վերացման գործը Հայաստանում, սկսած սեպտեմբերից մինչև դեկտեմբեր ամիսը, կարելի է ասել գտնվել է կատաստրոֆիկ վիճակում։ Քաղհիմնարկների տեղային մատակարարման անցնելը գավառներին անելանելի դրության մեջ դրավ։ Կենտրոնը վոչ միայն տեղերին ձրիաբար մատակարարել է դասագրքեր և գրենական պիտույքներ, այլ և հոգացել է ուսուցչության վարձը։ Գավառները անգ. վերացման գործին հատկացնում են չափազանց չնչին գումար, Հ. Կ. Կ. Կ. դեռևս չի տվել մեր ընդհանուր սմետայի մեջ մտած 7,000 ռուբլին. նույն դրության մեջ է գտնվում և Ժողկոմխորհից ստանալիք 21,000 ռ. այդպիսով մեր աշխատանքը զրկվել է նյութական բազայից, վորով և բացատրվում է մի քանի գավառներում աշխատանքների դադարումը։ Քաղլուսվարի կողմից կազմած, 480 հասնող (հաշված և նախ զինակոչներինը) անգ. վերացման կայանները կրճատվեցին։ Ձևնարկվել է «անգրագիտության վերացմանը նպաստող ընկերություն» (Հայաստանում) կազմակերպման. մշակված է այդ ընկերության կանոնադրությունը։ Անալոգ ընկերություն կազմակերպվել է նաև Ալեքսանդրոպոլում, վոր արդեն գործի է անցել։

Ի նկատի ունենալով վերոհիշյալը՝ կոնֆերանսը վորոշեց.

1. Անգրագիտության վերացման գործը համարել արտակարգ և հարվածային. առաջարկել Գավքաղլուսավարներին անմիջապես անցնել տեղերում անգ. վեր. արտ. Հանձնաժողովների կազմակերպմանն ու լիկ. կայանների ցանցի լայնացմանը։

2. Հասակավորների դպրոցներում — ինչ տիպի յել լինեն նրանք — դասավանդությունը կապել՝ քաղաքներում արդյունաբերության հետ, գյուղերում՝ գյուղատնտեսության հետ, ոգտագործելով բացի դասագրքերից «Մաճկալը» և այլ ձեռնարկներ։

3. Սովորողների հասակը սահմանել 16 - 35 տարին։

4. Անգրագիտությունը վերացնել առաջին հերթին կուսակցության անդամների միջև, յերկրորդ հերթին՝ Յերիտկոմմիության, յերրորդ հերթին՝ հողանտառմիության և չորրորդ հերթին՝ կին բաժնի ներկայացուցիչների միջև, միաժամանակ Արհմիության անդամների միջև անգրագիտությունը վերացնելով արհ. միության կուլտ բաժնի միջոցով, արհ. միության հաշվին։ Հողանտառ միության նկատմամբ բացառություն ընդունել 13 - 35 տ.։

5. Քաղլուսգլխավարը իր վրա և վերցնում իդեական ղեկավարությունը և տալիս է նամանավանդ մեթոդական հարցերում ճիշտ ուղղություն՝ կընդելով պայմանագիր արհ. միության, Յերիտկոմմիության, կին բաժնի, և Կարմիր բանակի հետ։

6. Հասակավորների դպրոցները գաղավորել հետևյալ կերպով. —

1. Անգրագիտության վերացման կայաններում 3 - 4 ամիս։

Ս. Կիսագրագիտության դպրոցներում 68 ամսվա տևողությամբ քաղաքներում, իսկ 6 - 10 ամսվա՝ տեղերում։

Բարձր տիպի հասակավորների դպրոցներում 1, 2, 3, տարվա տևողությամբ։

7. Բոլոր տիպի դպրոցները շաղկապել մի ընդհանուր օրգանական կապով, ամեն մի առտիճանում անցնել վորոշ ցիկլ անհրաժեշտ գիտելիքների։

8. Սովորողների քանակը խմբակներում սահմանել 20 - 30 հոգի։

9. Կոնֆերենցիան անհրաժեշտ է գտնում, լիկ. կայաններում և կիսագրագետների դպրոցներում կրթական գործը կանոնավոր հունի մեջ դնելու համար, Յերևանում և Ալեքսանդրում կազմակերպելու կենտրոնական հրահանգչական դպրոցներ։

10. Կոնֆերենցիան անհրաժեշտ է գտնում մեծահասակների համար լույս ընծայել Թվաբանության ձեռնարկ, իսկ լիկ. կայանների ուսուցչության համար՝ մեթոդական ժողովածու։

11. Հանրապետության սահմաններում 1924 թ. համար լիկ. կայանների ցանցը հասցնել 600 -ի, վորից 200 -ը նախզինակոչների համար։

12. Հատուկ ուշադրություն դարձնել ազգային փոքրամասնությունների անգրագիտության և կիսագրագիտության վերացմանը։

13. Տեղերում կազմակերպել լիկ. կայաններում պարապող ուսուցիչների կոնֆերանսներ, տալով այդպիսիներին կարճատև կուրսերի բնույթ։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՅԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Գիտության առնելով անգրագետ և կիսագրագետ հասակավորների դպրոցներին վերաբերյալ ծրագրա - մեթոդական խնդիրները սեկցիան առաջարկում է։

Անգրագետների դպրոցում գրագիտության կիրառելի մեթոդ ընդունել և իրականացնել ամերիկյան - հնչական միացյալ մեթոդն, այսինքն ամբողջ նախադասությունների և բառերի ու վերլուծական համադրական մեթոդը, վորի կոնկրետ արտահայտությունը ներկայումս «Գրագետ» այբբենարանն է։ Սեկցիան գտնում է, վոր սույն այբբենարանի մեթոդական բացատրականի վրա պետք է հրավիրել ուսուցիչների հատուկ ուշադրությունը և հաշվի առնել տալ այն բոլոր թերությունները, վորոնք հրապարակ կգան փորձից թե «Գրագետ»-ի և թե մեթոդի վերաբերյալ։

Կիսագրագետների և անգրագետների դպրոցներում ընդունել և կիրառել կոմպլեկսային մեթոդը՝ հնարավորության սահմաններում, ընդունելով թերև վողնաշար տնտեսական աշխարհագրությունը, իսկ մայրենի լեզվի և Թվաբանության ուսուցման նյութը կապել նույն առարկայի հետ, ոգտագործելով լայն չափով «Մաճկալ» թերթի տված նյութը։

Զանգահարներին ժամանակակից սովորեցնելիս մեծ շեղումներ կատարել մանկահասակների ուսուցման մեթոդներից։ Խստորեն հրաժարվել վերացական, սխոլաստիկ դասավանդման ձևերից և յելնել շրջապատի կենցաղից, ծանոթանալով թվական փոխհարաբերությունների հետ։ Մեծ տեղ տալ բանավոր և առավել գրավոր հաշվարարության կիրառելով մեծ չափերով նաև որացույց, տեղեկատուներ (справочники) և այլ նման գործնական արժեք ներկայացնող աղբյուրներ։ Գործադրել նույնպես դիագրամներ՝ շրջանաձև, սյունաձև, գրաֆիկներ և համրիչներ։ Սկզբում զեկավարվել տեղական չափերի գործածությամբ և հետզհետե անցնել մետրական չափերի։ Խնդիրները պետք է լինեն միայն իրական կյանքից, սկզբում տնտեսական այնուհետև նաև գիտական, հասարակական, քաղաքական բնագավառներից, ոգտվելով մեր վիճակագրական ճշգրիտ տվյալներից։

Ծրագրի նկատմամբ անգրագետների դպրոցում բավականանալ «Գրագետ»-ի ընձեռած նյութով, թողնելով ուսուցիչների նախաձեռնության և փորձին. թերին լրացնել այլ իրական աղբյուրներից — գլխավորապես «Մաճկալ» թերթից, տալով թերևս մատչելի զրույցներ բնական գիտությունների վերաբերյալ։

Կիսագրագետների դպրոցներում ընդունել և կիրառել տալ դպրոցդասընթացային բաժնի վերամշակած և մեր դպրոցական միջավայրին հարմարեցրած անդ. վերացման Համառուսական արտ. Հանձնաժողովի 22 թվի ծրագիրը։

Քաղաքական գրագիտության ուսուցումը — անգրագետների և կիսագրագետների դպրոցներում իրականացնել կուսակցական ընկերների միջոցով, գումարելով հասակավորների ընդհանուր խմբավորումներ և դրանց մեջ եվանդել քաղաքական գրագիտություն։

ԽՐՃԻԹ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ

ՍԵԿՑԻԱՅԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Խրճիթ-ընթերցարանը հանդիսանում է գյուղական աշխատավորության մեջ տարվող կուսակցական և կրթալուսավորչական աշխատանքների միակ կենտրոնացնողն ու պարփակողը։ Նա պետք է լինի ու հանդիսանում է միակ մասսայական հիմնարկը, վորի միջոցով գյուղը վերակազմվելու յե ամբողջովին ու նորանալու։

Բանի վոր խրճիթ-ընթերցարանը գտնվում է գյուղում՝ նրա մեջ ու նրա միջոցով տարվող աշխատանքները պետք է կրեն գյուղատնտեսական թեքում՝ նպատակ ունենալով վոչ միայն տնտեսությունն ու գյուղացու գիտական մակարդակը բարձրացնել, այլ նաև սերտ կերպով կապել քաղաքի արդյունաբերության ու բանվորության հետ։

Խրճիթ ընթերցարանի միջոցով Խորհրդային յերկրներում սկսված խորհրդ. շինարարական աշխատանքին պետք է կցել գյուղական աշխատավորական լայն մասսաները, ամրապնդել բանվորի և աշխատավոր գյուղացու կապն ու կարելով գյուղը հնից՝ տանել դեպի կոմունիստական հասարակարգը։

Գյուղի և քաղաքի զոդման ուժեղացում, գիտության կիրառում գյուղատնտեսության մեջ, գյուղացու կուլտուրական մակարդակի բարձրացում և գյուղի ձևափոխում ու նորոգում՝ ահա պահանջներ, վորոնց պիտի ձգտի Խ.-Ը։

Այդ նպատակներից յելնելով՝ կոնֆերանսը կայացնում է հետևյալ վորոշումները.

ԿԱԶՄԱԿԵՐՊԶԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

1. ՀԱՍՏԱՏՈՒՆ ՅԱՆՑ

ա. Կոնֆերանսը անհրաժեշտ է դտնում Հանրապետության սահմաններում ունենալ խրճիթ-ընթերցարանների հաստատուն ցանց թվով 200։

բ. Հենվելով անցյալի փորձի վրա և ի նկատի ունենալով այն հանգամանքը, վոր խրճիթ-ընթերցարանները գարնանից մեռնում են, իսկ ձմեռն էլ, շատ հաճախ, թույլ ու նվազ գոյություն են քարշ տալիս, նաև այն, վոր հաճախ գույքը փչացվում և պատասխանատվի չգոյության պատճառով՝ կոնֆերանսն անհրաժեշտ է դտնում անպայման ունենալ խրճիթ-ընթերցարանների համար ռոճիկով վարիչ։

2. ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԽՐՃԻԹ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ

ա. Խրճիթ-ընթերցարանի աշխատանքներն ավելի ինտենսիվ ու կանոնավոր դարձնելու համար անհրաժեշտ է կազմակերպել խրճիթ-ընթերցարանի վարչություն։

բ. Խ.-ը. վարչությունը կազմված է լինելու 5-7 հոգուց, վորի կազմը հետևյալն է՝ խրճիթ ընթերցարանի վարիչ, կոմ. և յերիտմիության բջիջների քարտուղարները, գյուղխորհրդի նախագահը և աշխատավոր գյուղացիության ներկայացուցիչը։

գ. Խ.-ը.-ի վարչության անդամներն իրենց միջև պետք է բաժանեն աշխատանքները։

3. Խ.-Ը. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿՈՄ. ՈՒ ՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԲՋԻՋՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ա. Բջիջներն իրենց աշխատանքները անկուսակցական գյուղացիության մեջ տանում են խրճիթ-ընթերցարանի միջոցով։

բ. Խ.-ը. աշխատանքներն ինտենսիվ դարձնելու նպատակով բջիջները և խ.-ը. վարչությունները պահպանում են ամենասերտ կապ կուսհրահանգչի և գավքաղուսվարի հետ նրանցից ցուցմունքներ ու դիրեկտիվներ ստանալու համար։

4. ԽՐՃԻԹ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ա. Կոնֆերանսը հաստատում է խրճիթ-ընթերցարանի կանոնադրությունը։ (Տես, «Ակումբային ուղեցույց»)

5. ԽՐՃԻԹ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՅԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ա. Խնդրել Քաղլուսգլխավարին դիմել համապատասխան մարմիններին անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու հաստատված նախահաշվով խրճիթ-ընթերցարանին տրամադրված գումարները գավդործկոմներից ստանալու համար։

բ. Ի նկատի ունենալով այն հանգամանքը, վոր տեղական միջոցները ուշ են, բայց անհրաժեշտ է խրճիթ-ընթերցարանների ցանցն ընդլայնել կամ յեղածների գոյությունն ապահովել՝ կոնֆերանսն անհրաժեշտ է գտնում լայն կամպանիա անցկացնել խրճիթ-ընթերցարանը համայնքների հաշվին անցկացնելու։

6. ԽՐՃԻԹ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ա. Խրճիթ-ընթերցարանի աշխատանքների հաշվառումը կանոնավորելու նպատակով տպագրել և բոլորին ուղարկել Քաղլուսգլխավարի մշակած հաշվետման ձևերը։

բ. Պարտադրել խրճիթ-ընթերցարանի վարիչին մինչև ամսի 1-ը ներկայացնել գավքաղուսվարին նախորդ ամսվա գործունեության զեկուցումը։

II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. ԱԳԻՏ-ԿԱՄՊԱՆԻԱՆԵՐԻ ԱՆՊԻԱԴԱՐԶՈՒՄԸ

ա. Կյանքում անցկացվող բոլոր կամպանիանները պետք է անցկացվեն նաև խրճիթ-ընթերցարանում, միայն հարմարեցված գյուղական ու տեղական պայմաններին։

բ. Ժամանակավոր բնույթ կրող կամպանիաներին զուգընթաց պետք է գյուղում անցկացնել սիստեմատիք ու տևական կերպով գյուղատնտեսական, առողջապահական, հակակրոնական ու լուսավորության դասընթացներ։

գ. Անհրաժեշտ է հանձնարարել Քաղլուսգլխավարին մշակել մանրամասն ծրագիր և նյութեր սիստեմատիկ դասընթացների համար։

դ. Գավքաղլուսվարները պարտավորվում են Քաղլուսգլխավարի մշակած ընդհանուր բնույթ կրող ծրագիրներն ու նյութերը թե ժամանակավոր և թե տևական կամպանիաների և սիստեմատիք դասախոսությունների համար հարմարեցնել յուրաքանչյուր վայրի ու տեղի առանձնահատուկ պայմաններին։

յե. Խրճիթ-ընթերցարանը պետք է զարդարվի ու հարստացվի զանազան ցուցադրական նյութերով, նկարներով ու լոզունգներով յուրաքանչյուր կամպանիայի համար առանձնահատուկ ձևով ու բովանդակությամբ։

զ. Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ սովորական դարձած ու յերկար ժամանակ միևնույն տեղում գտնվող իրն ու լոզունգը կամ նրկարը հնանում է և վոչ վոքի ուշադրություն չի գրավում, հետևաբար է իր արժեքը կորցնում է, անհրաժեշտ է խրճիթ-ընթերցարանի զարդարանքները կամ նյութերը, գոնե ձևով փոփոխության յենթարկել, իսկ անցկացրած կամպանիայի զարդարանքները հանել մինչև նորից կարիք չզգացվի։

2. ԽՐՃԻԹ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԱՑՈՒՅՑ

ա. Խրճիթ-ընթերցարանի վարչությունը մշակում է մի ամսվա ընթացիկ աշխատանքների ծրագիր ամանանշելով թե յուրաքանչյուր որ ինչ աշխատանք է տարվելու։ Դա հարմարեցվելու յե սիստեմատիկ դասախոսությունների հետ՝ ի նկատի ունենալով նաև մյուս աշխատանքները։

բ. Վերոհիշյալ ծրագիրը տրվում է ի հաստատություն գավքաղլուսավարին շրջանային ակումբային վարչության միջոցով։

3. ԿԵՆՑԱՂԻ ԱՐՏԱՅՈԼՈՒՄԸ ԽՐՃԻԹ-ԸՄԹԵՐՑԱՐԱՆՈՒՄ

ա. Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ հին կենցաղից նորի փոխանցման ասպարեզում գյուղը շատ հետ է մնացել, աշխատել առանձին զարկ տալ կենցաղային տարրին։

բ. Խրճիթ-ընթերցարանում հաճախակի կազմակերպել կենցաղային յերեկոներ և աշխատել դրանց միջոցով պայքարել նահապետական սովորությունների ու նախապաշարմունքների դեմ և զարկ տալ կոլեկտիվիստական կյանքին։

գ. Աշխատել նոր կենցաղի բջիջ կազմել խրճիթ-ընթերցարանում կուսակցական և կոմյերիտմիության բջիջների անդամներից, որոնք որինակ կծառայեն նաև մյուսներին։

դ. Հանձնարարել Քաղլուսգլխվարին մշակել խրճիթ-ընթերցարանի կենցաղային յերեկոների ամենամսյա ծրագիր՝ թողնելով գավքաղլուսավարներին տեղական պայմաններին հարմարեցնելու։

4. ԲԱՐՁՐԱՁԱՅՆ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ա. Կազմակերպել բարձրաձայն ընթերցում խրճիթ-ընթերցարանում թե լրագրերի, թե գրքերի և թե բրոշյուրների։

բ. Բարձրաձայն ընթերցման պատասխանատու ընկերը պետք է կազմակերպի ամեն որ բարձրաձայն ընթերցում համաձայն որացույցի և նախորոք պատրաստի ու ղեկավարի ընթերցումը։

գ. Բարձրաձայն ընթերցումների կանոնավոր ու հանրամատչելի նյութ ունենալու նպատակով խնդրել Քաղլուսգլխվարին դիմել համապատասխան հիմնարկներին և նրանց հետ հրատարակել մատչելի գյուղատնտեսական, առողջապահական, բնագիտական և այլ գրքեր ու բրոշյուրներ։

Հ.Ս.Խ.Հ. Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Գ.Հ. Публичная Библиотека
7/II-1922
ՀԱՇՎԱ. Инвентарный
Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ

5. ԶՐՈՒՅՑ

ա. Բարձրաձայն ընթերցումից հետո ղեկավար ընկերը պետք է կազմակերպի դրա շուրջը զրույց։

բ. Զրույցին կանոնավոր ընթացք տալու և դա արդյունավետ դարձնելու նպատակով ղեկավարը պետք է նախորոք մշակի հարցերը, կուսհրահանգչի կամ քաղլուսվարի հետ նախորոք մշակի զրույցի ծրագիր և պատրաստվի դրա համար։

գ. Զրույցի նյութը կարելի յե վերցնել թե լրագրից և թե գրքերից։ Վերջիններս պետք է լինեն ընտրված և սիստեմատիկ զրույցների նյութ մատակարարելու։ Ցաք ու ցրիվ ընթերցումը կլինի անոգուտ։

դ. Պետք է աշխատել զրույցին մասնակից դարձնել բոլոր ունկընդիրներին։

յե. Վորպեսզի զրույցը լինի հետաքրքիր և գրավի ամբողջ աշխատավորությանը (գյուղի), անհրաժեշտ է զրույցի նյութը դարձնել մատչելի, սկսել ծանոթից և կապել շրջակայքի ու տեղական պայմանների հետ։

6. ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1003
19503

ա. Կազմակերպել պարբերաբար դասախոսություններ, գյուղատնտեսական, քաղաքական, առողջապահական, բնագիտական և այլ նյութերի շուրջ՝ ոգտագործելով շրջանի մասնագետներին։

բ. Քաղլուսգլխվարին խնդրել մշակել դասախոսությունների ծրագիրներ, հնարավորության դեպքում թեզիսներով, ուղարկել շրջաններին ոգտագործելու։

7. ՔԱՂԴԱՏԵՐ ՅԵՎ ԿԵՆԴԱՆԻ ԼՐԱԳԻՐ

ա. Խրճիթ-ընթերցարանում տարվող կամպանիաների և ընդհանուր աշխատանքների ինտենսիվության ու արդյունավետության նպատակով պետք է զարկ տալ քաղդատերին։

բ. Քանի վոր քաղդատերը նոր են կիրառվում մեր իրականության մեջ և տեղերի ընկերների անծանոթության պատճառով այդ աշխատանքին՝ կարող են լինել շեղումներ, վոր կատն անցանկալի արդյունք, անհրաժեշտ է գավքաղլուսվարների և կուսհրահանգչի անմիջական հսկողությունը կամ ղեկավարությունը քաղդատերին։

գ. Շրջանային խոշոր կենտրոններում կամ աչքի ընկնող գյուղերում ցանկալի յե կազմակերպել կենդանի լրագիր, վորի համար ասպարեզ պիտի քաշվեն պատրաստված ընկերներ։ Գավքաղլուսվարը պարտավոր է ամենասերտ ու ուժեղ ղեկավարությունը ցույց տալու դրանց։

դ. Կենդանի լրագիրը պետք է պարփակի որվա աչքի ընկնող լուրերն ու տեղի չարիքները։

8. ՅՈՒՅԱԳՐԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ ՅԵՎ ԹԱՆԴԱՐԱՆ

ա. Անցկացվող յուրաքանչյուր կամպանիան, ինչպես նաև դասախոսություններն ավելի ըմբռնելի դարձնելու նպատակով անհրաժեշտ է կազմել համապատասխան ցուցադրական ժողովածուներ։

բ. Տեղական ուժերի ոգնությամբ կազմել կոլեկցիաներ։

գ. Կազմակերպել եքսկուրսիաներ դեպի ցուցադրական և որինակելի տնտեսություններն ու, հնարավորության դեպքում, նաև քաղաքի դանազան հիմնարկներն ու գործարանները։

դ. Ցուցադրական հավաքածուներ կազմելու համար խնդրել վորոշ տնտեսական որգանների և սոցդասավարի ոժանդակությունը։

յե. Հավաքված նյութերը տեվականորեն պահելու և նրանք նպատակահարմար ձևով միշտ ոգտագործելու համար անհրաժեշտ է խրճիթ-ընթերցարաններին կից ունենալ թանգարանային անկյուն։

9 ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ ՅԵՎ ՅԵՐԵԿՈՒՅԹՆԵՐ

ա. Խրճիթ-ընթերցարանում կենցաղային տարրն ուժեղացնելու և աշխատավորական մասսաներին սերտ կապելու խրճիթ-ընթերցարանի հետ, ինչպես նաև գեղարվեստական ու ագիտացիոն սիստեմատիք աշխատանք տանելու համար անհրաժեշտ է կազմակերպել նաև ներկայացումներ ու յերեկույթներ։

բ. Քաղլուսգլխավարին խնդրել տալ ու մատակարարել նոր ագիտ պիյեսաներ։

գ. Աշխատել բազմացնել և ունենալ նաև նոր յերգեր։

դ, Ցանկալի համարել յուրաքանչյուր շրջանային կենտրոնում ունենալ շրջիկ դերասանական խումբ, ինքնարդարացման սկզբունքով, վորը շրջանում պարբերաբար ներկայացումներ ու յերեկույթներ կազմակերպի։

10 ՔԱՂԼՈՒՍԳԼԽՎԱՐԻ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԵՈՒԹՅՈՒՆԸ

ա. Քաղլուսգլխվարը պետք է մատակարարի տեղերին ծրագիրներ, թեզիսներ, նոր պիյեսաներ և ցույց տա ընդհանուր ղեկավարություն։

Մշակի աշխատանքի նոր ձևեր, ցուցմունքներ տա և աշխատի քաղլուսաշխատանքի թուլության բացերը վերացնել։

բ. Կենտրոնի համապատասխան հիմնարկների միջոցով հրատարակել հանրամատչելի ձեռնարկներ ու գրքեր, վոր խրճիթ-ընթեցարանները կարողանան ձեռք բերել։

11 ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՅԵՎ ԴՅՈՒՂԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՅԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄ

ա. Քանի վոր խրճիթ-ընթերցարանը հանդիսանում է կուսակցական և կրթալուսավորչական աշխատանք տանող մասսայական հիմնարկ՝ պետք է աշխատել ոգտագործել գյուղում գտնվող բոլոր ձեռնահաս ու ինտելիգենտ ուժերն այդ հիմնարկի ֆունկցիաներն իրագործելու համար։

բ. Խրճիթ-ընթերցարանի վարիչները պետք է ոգնավեն շրջանայի բժշկի, գյուղատնտեսի, հողժողկոմի հրահանգչի, վորևե ինտելիգենտ ուժի և կուսհրահանգչի ներկայությունից ու նրանց ոգնությամբ զարկ տան խրճիթ-ընթերցարանի աշխատանքներին։

12. Խրճիթ-ընթերցարանի աշխատանքներն ինտենսիվ դարձնելու նպատակով տարին մի անգամ գավքաղլուսվարները պետք է նշանակեն լավ աշխատող խրճիթ-ընթերցարանի մրցանակ։

ԱԿՈՒՄԲՐԱՅԻՆ ՍԵԿՑԻԱՅԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ակումբային գործն ընդհանրապես, պետք է ասել գտնվել է և գտնվում է ծանր ու անանախանձելի վիճակի մեջ, վոչ թե միայն այն պատճառով, վոր ակումբները հանվել են պետական մատակարարման ցանցից, նոր տնտեսական քաղաքականության ազդեցության ներքո, այլ գլխավորապես այն պատճառով, վոր տեղերում չենք ունեցել և չունենք մասնագետ ակումբի վարիչներ, այդ ուղղությամբ քիչ թե շատ փորձված ընկերներ, խրճիթ-ընթերցարանների վարիչներ և գրադարանագետներ։

Ջունենալով տեղերում համապատասխան աշխատակիցներ, մենք հնարավորություն չունեցանք կանոնավորելու և ընդլայնելու աշխատանքները։ Ակումբային աշխատանքը պահանջում է ավելի քան անձնվիրություն, սեր դեպի գործը, աշխատասիրություն, համբերություն ձեռներեցություն, ինքնագործունեության լայն թափ և տոկունություն։

Գլխքաղլուսվարին կից հիմնվել է ակումբային կենտրոնական վարչություն, վորի շուրջը հավաքվել են այդ գործին քիչ թե շատ հմուտ աշխատակիցներ, վորոնք ունեն անձնական փորձառություն և նախաձեռնություն։ Ակումբային կենտրոնական վարչության կանոնադրությունը հաստատված է Կ. Կ. Կ. Կ. Ագիտ բաժնի կողմից։ Թեև տեղերում մենք միանգամայն աշխատակիցներ չունենք, բայց այսոր Գլխքաղլուսվարը հրատարակել է ակումբային աշխատանքների ուղեցույց, վորով կարող են ոգտվել բոլոր գիտակից ընկերները տեղերում ղեկավարություն ընդունելու համար։ Ահա այս բոլորը ունենալով աչքի առաջ՝ քաղլուսվարների առաջին կոնֆերանսը վորոշեց.

1. Ակումբային աշխատանքները ուժեղացնելով բարձրացնել լայն աշխատավոր մասսայի կուլտուրական մակարդակը։

2. Ակումբային աշխատանքների հիմք ընդունել մասսայական կոմունիստական պրոպագանդան։

Վորպեսզի այս հիմնական խնդիրները ստանան հաջող լուծում կոնֆերանսը անհրաժեշտ է գտնում դեպի աշխատավոր լայն մասսայի պահանջները ու կարիքները լինել վերին աստիճանի զգայուն, աշխատանքները կատարել արագությամբ և ճշտությամբ նման աշխատանքներին հաջող և հատարել

մակերպված ընթացք տալու համար Գլխաղլուսվարին կից կազմակերպված Ակումբային Կենտրոնական Վարչությունը ընդունել որպես ընհանուր գաղափարական ղեկավար մարմին և միասնական ակումբային ցանցի կենդրոն։

Միասնական ակումբային ցանցի մեջ պետք է մտնեն Հայաստանի այն բոլոր հիմնարկները, որոնք կրում են ակումբային աշխատանքների բնույթ։

Միասնական ակումբային ցանցը պետք է ունենա չորս հիմնական ճյուղավորում։

1) Խոշոր կենդրոնների, 2) գավառային կենտրոնների, 3) գյուղական և 4) կարմիր բանակայինների։

Բացի այդ ակումբները պետք է լինեն երկու տիպի (տեսակ)։

1) Տեղական 2) Շրջանային։

Տեղական ակումբները պետք է կազմակերպել գյուղերում և բանվորական կենտրոններում, որոնք անմիջապես պետք է լինեն կապված մասսայի հետ։

Շրջանային ակումբները պետք է կազմակերպվեն շրջանային կենտրոններում ունենալով թե իդեական և թե գաղափարական հսկողություն տեղական ակումբների վրա։

Ազգային փոքրամասնությունների ակումբները նույնպես պետք է մտնեն միասնական ակումբային ցանցի մեջ և աշխատանքները պետք է տանեն համաձայն կանոնադրության, որը պետք է լինի ընդունված Ակումբային Կենտրոնական Վարչության կողմից և հաստատված Կ. Կ. Կ. Կ. Ագիտ Բաժնի կողմից։

Զանազան հիմնարկների կուլտ բաժինները ինքնուրույն կերպով կազմակերպում են իրենց ակումբները, բայց և անպայմանորեն մտնում են ընդհանուր ակումբային ցանցի մեջ և Ակումբային Կենտրոնական Վարչությունից ստանում ընդհանուր իդեական ղեկավարություն։

Կուսակցական և յերիտկոմմիության ակումբները տանում են իրենց աշխատանքները համաձայն կանոնադրության, որը հաստատված պետք է լինի Կ. Կ. Կ. Կ. Ագիտ Բաժնի կողմից և պետք է մտնեն միասնական ակումբային ցանցի մեջ։

Աշակերտական ակումբների ընդհանուր ղեկավարությունը տարվում է Սոցդասվարի համապատասխան բաժնի հետ։

Շրջանային ակումբները հաշվետու յեն Գավքաղլուսվարին, իսկ սա էլ Գլխաղլուսվարին. գյուղական ակումբները և խրճիթընթերցարանները հաշվետու յեն շրջանային քաղլուսվարին։ Բոլոր ակումբները ամիսը մի անգամ զեկուցման հետ հաշվետու են ներկայացնում Ակումբային Կենտրոնական Վարչության, իսկ յերեք ամիսը մի անգամ յերեքամսյա լրիվ աշխատանքների։ Բոլոր կանոնադրությունները ներկայացվում են Ակումբային Կենտրոնական Վարչության, որը ընդունելության դեպքում ներկայացնում է Կ. Կ. Կ. Կ. Ագիտ Բաժնին հաստատության համար։

Բոլոր բանվորական ակումբները պետք է հիմնեն իրենց հիմնարկների միջոցով կուլտուրական ֆոնդ—հիմնարկության աշխատակիցների կուլտ տոկոսային կենտրոնական ձևով։

Կոնֆերանսը ցանկալի յե համարում, որպեսզի կենտրոնական մարմինները իրենց ակումբներին հատկացնեն դրամական միանվագ նպաստ ամեն տարի հնարավորության սահմաններում, չնայած որ բոլոր ակումբները պետք է մատակարարվեն տեղական միջոցներով։

Կոնֆերանսը գտնում է՝ նպատակահարմար ակումբային աշխատանքները բաժանել սեկցիաների միմիայն այն դեպքում, յերբ աշխատանքները ստացել են լայն ծավալ, հակառակ դեպքում աշխատանքները տանել անմիջապես խմբակների միջոցով։ Սեկցիայի աշխատանքները պետք է ղեկավարեն վարչության անդամները կամ կոոպտացիայի յենթարկված ընկերներից, որոնք պատրաստ են աշխատանքը ղեկավարելու։ Ամեն մի սեկցիան հիմնում է համաձայն իրեն առաջադրած խնդիրների հատուկ խմբակներ, իսկ յեթե նման խմբակներ ակումբում գոյություն ունեն, մտնում են այդ սեկցիայի կազմի մեջ։ Նայած առաջադրած կամպանյաների սեկցիաները կարող են յենթարկվել փոփոխությունների։ Միևնույն խմբակը կարող է տանել աշխատանքներ զանազան սեկցիաներում։

Քաղաքական խմբակը ակումբներում պետք է ղեկավարիչ խմբակի դեր խաղա և այն բոլոր հարցերը ու խնդիրները, որոնք մշակվում են քաղաքական խմբակում համապատասխան արձագանք պետք է գտնեն անպայմանորեն այլ բոլոր խմբակների աշխատանքների մեջ։ Այսինքն յեթե քաղաքական խմբակում քննվում է հակակրոնական ագիտացիայի խնդիրը, նկարչական խմբակը պատրաստում է այդ բովանդակությամբ պլակատներ, կենդանի լրագիրը համապատասխան հոդվածներ, դրամատիկական խմբակը բեմադրություն և այլն։ Բոլոր խմբակները իրենց անդամների միջից պետք է ընտրեն խմբակի բյուրո յերեք հոգուց, որոնք պետք է տանեն խմբակի տնտեսական և տեխնիկական հարմարությունների հոգատարությունը։ Ցերը մի վորևե սեկցիայի խմբակներում տվյալ կապերը մշակվել են, յուրացվել են անդամների կողմից և ավարտված են համարվում, սեկցիայի վարիչը պարտավոր է գումարել սեկցիայի անդամների և ղեկավարների ընդհանուր ժողովը՝ վերջնական վորոշում կայացնելու և բոլոր խմբակների աշխատանքները բերելու ընդհանուր հայտարարի. այնուհետև միայն ակումբի վարչության համաձայնությամբ տվյալ աշխատանքների արդյունքը կարելի յե հանել մասսան, պլակատների, զեկուցումների, դիագրամների, քաղդատերի, առողջապահական դատերի, հակակրոնական դատերի, զանազան բեմադրությունների, իմպրովիզացիայի, զանազան խաղերի, հանելուկների, շարադների, սպորտի, կենդանի և պատի լրագրի, աֆիշների, լոզունգների, ցուցահանդեսների միջոցով։ Միաժամանակ անհրաժեշտ է կազմակերպել ակումբներում, ցերեկույթներ, յերեկույթներ, համերգներ, զրոսանքներ, եկսկուրսիաներ, գրական գիտական և յերաժշտական յերեկոներ, ներկայացումներ, նշանակելով մրցանակ այս կամ այն

հաջող աշխատանքի համար։ Նման մասսայական հավակությունները ցանկալի է հարմարեցնել և կապել տեղական պայմանների, սովորությունների և կենցաղի հետ։ Բոլոր տեսակ աշխատանքները, որոնք դուրս են բերվում մասսան պետք է խիստ կերպով լինեն ստուգված և նախապես յենթարկված փորձերի և ակումբի վարչության կողմից խիստ ու անաչառ քննադատության։ Բացի այդ, որ ամենակարևորն է, բոլոր աշխատանքների մեջ պետք է փայլի համապատասխան գեղարվեստական ճաշակ, նամանավանդ ներկայացումներին, բեմադրություններին և զանազան քաղդատերի ժամանակ, որպեսզի ունկնդիրներին տրվի լրիվ պատկեր և ստեղծագործության գոնե մինիմում թափը, որովհետև մեր աշխատանքները ակումբներում գլխավորապես պետք է տանեն վոչ պրոֆեսիոնալ դրսի ուժերի միջոցով, այլ խմբակների անդամները, որոնք նպատակ պետք է ունենան դաստիարակելու լայն աշխատավոր մասսան և զարգացնելու նրա մեջ քաղաքակազմակերպչական գիտակցությունը։

Այսպես դրված գործը միայն կարող է արժանանալ ունկնդիրների արձագանքին և նման աշխատանքը միայն և միայն կարող է իրագործել մեր առաջ դրված հերթական խնդիրները, որոնք բղխում են մեր իրական կյանքից։

Ինչ վերաբերվում է աշխատանքների մեթոդին կոնֆերանսը որոշում է ընդունել արտադպրոցական մեթոդը, որը հիմնվում է կամավոր և վոչ հարկադրական սկզբունքների վրա։ Ակումբներում գլխավորապես ունենալով գործ հասակավորների հետ մենք չենք կարող գործադրել դպրոցական մեթոդը, որը պահանջում է որոշ ժամեր, առանձին լարված ուշադրություն, տեխնիկական հարմարություններ, աշխատասիրություն և այլն։ հասակավորներն ավելի շուտ հետաքրքրվում են կյանքի առորյա խնդիրներով, տնտեսությամբ։ որոնցից և պետք է սկսել, զարգացնել և աննկատելիորեն անցնել այն հարցերի պարզաբանման, որոնք մենք նպատակ ունենք ընդհանրացնելու։ Մեթոդական սկզբունքների հետ միաժամանակ մեր առաջ դրված, մեզ բոլորիս հետաքրքրող և ամենա ցավոտ այն հարցն է, թե ինչպես կապել մասսան ակումբի հետ։ Ահա այստեղ է, որ կոնֆերանսը պետք է տա իր հեղինակավոր առաջարկը, այլապես մենք ակումբներ չունենք քանի որ նրանց մեջ կյանքը չե յեռում։ Այս հարցի լուծումը պահանջում է որոշ սիստեմատիկ աշխատանք և այս մի որվա գործ չե։

Փորձը մինչև որս մեզ ցույց տվեց, որ տեսական դասախոսություններով չի կարելի մասսային կապել ակումբի հետ, այլ նրան պետք է տալ ռեալ օգուտ, այդ նպատակով անհրաժեշտ է բոլոր թեորետիկ խնդիրները անմիջականորեն կապել կյանքի հետ, գործնական նշանակություն ու բացատրություն տալ ամեն ինչին և սկսել ծանոթից ու անցնել անծանոթին ամեն ինչ սերտորեն միացնել գործնականին։

Ինչ վերաբերվում է կենցաղին, հարկավոր է հարցը բաժանել յերկու մասի և այդ լուծման հարկավոր է վերաբերվել ամենամեծ նրբությամբ և զգուշությամբ, որովհետև խնդրի առաջին մասը պետք է լուծվի հին կենցաղի վերացումով, իսկ յերկրորդը նորի ստեղծագործությամբ, որքան որ մեծ խոչնդոտների յենք հանդիպելու խնդրի առաջին մասի լուծման մեջ նույն չափ և մեծ դժվարություններ են լինելու մեր առաջ ստեղծելու նոր կենցաղը։

Հին կենցաղի վերացման գործում մեծ դեր է կատարելու հակակրոնական ագիտացիան, որին հարկավոր է տալ մեծ պարկ։ Պետք է աշխատել սիստեմատիկ ու կանոնավոր աշխատանք տանել կենցաղային ասպարեզում և կենցաղային յերեկոների ու ակումբային աշխատանքների միջոցով աշխատել վերացնել հինը և կերտել նորը։

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՍԵԿՑԻԱՅԻ ՎՈՐՈՇՈՒՄ ՆԵՐԸ

Դպրոցից դուրս ազգաբնակչության $^{9}/_{10}$-ի համար գրադարանները միակ միջոցն են ինքնակրթության, ամեն տեսակ ուսումասիրությունների և ընդհանրապես ժողովրդի մտավոր կուլտուրան բարձրացնելու։ Մինչև այժմս մեր հանրապետության սայմաններում զանազան օբյեկտիվ պայմաններից դրված՝ գրադարանային գործը դեռ չի կազմակերպված և դրած ամուր հիմքերի վերա. այս խոչոր բացը ուղղելու համար կոնֆերանսը առաջարկում է հետևյալը՝

ԿԵԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՄԱՍ

1. Հայաստանի 9-ը գավառական կենտրոններից յուրաքանչյուրում ունենալ մի մի գրադարան, բացի այդ հանրապետության ամբողջ տերիտորիայի կենտրոնական գյուղերում հիմնել 11 գրադարան։

2. Գրադարանային գործը կանոնավորելու և ղեկավարելու համար պետք է կազմակերպել Յերևանում Բաղլուսգլխվարին կից կենտրոնական գրադարանային վարչություն։

3. Կենտրոնական գրադարանային վարչության պարտականությունն է.

Ա). Կազմել գրացուցակներ զանազան տիպի գրադարանների համար։

Բ). Մշակել հրահանգներ գրադարանների ներքին կազմության վերաբերյալ։

Գ). Կազմակերպել գրադարանների հաշվետվությունը և վիճակագրությունը։

Դ). Տալ ցուցմունքներ գրացուցակ կազմելու մասին։

Յե), Կազմակերպել ընթերցանության ղեկավարումը։

4. Գրադարանների կազմակերպման համար ցանկալի համարել տասնորդական սիստեմի կիրառումը։

5. Ընդունելով վոր գրադարաններին վերապահված է կատարելու

ամենախոշոր և անփոխարինելի դերը ժողովրդի մասավոր հոգեկան կուլտուրան զարգացնելու և բարձրացնելու գործում՝ կոնֆերանսը առաջարկում է քաղլուսխիմարկներին ստեղծել այնպիսի պայմաններ, վոր գրադարանային գործը դեպի ինքը գրավի ամենալավ և պատրաստված ուժերը։

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱԳԻՏԱՑԻԱՅԻ ՍԵԿՑԻԱՅԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Մեր ընդհանուր քաղլուսվարական աշխատանքի մեջ գեղարվեստական դաստիարակության գործը բռնում է շատ խոշոր տեղ. անգրագիտության վերացման, կուլտ-կրթական և քաղաքական լուսավորության միջոցների հետ միասին նա կազմում է այն զենքերը, վորոնք հոկտեմբերյան հեղափոխությանը տրամադրեց աշխատավոր մասսաներին գեղարվեստի բոլոր կարեվոր ճյուղերը և մասնավորապես թատրոնը մեծ ընդունելություն և կիրառում է գտել մեզանում. անշուշտ գեղարվեստի ակտուալ ձևերին ավելի մոտ եր կանգնած աշխատավորությունը և նա պատկերավոր և զգայողական ըմբռնումներով ավելի հեշտ է բավարարում յուր քաղաքական լուսավորության պահանջները, քան թե դասախոսության, ընթերցանության և այլ միջոցներով։

Սակայն գեղարվեստական դաստիարակությունը յուր կոչման բարձրության վրա դնելու հարցը միշտ էլ զբաղեցրել է Քաղլուսվարներին, բայց և այնպես ցանկալին այս ասպարեզում դեռևս չի իրականացած։ Գեղարվեստական դաստիարակության հիմնարկների պետական մասակարարումից հանվելը, համապատասխան գրականության և ռեպերտուարի բացակայությունը, այլ և աշխատանքի ժամանակակից կոլեքտիվիստական և ինքնագործունեության վոչու փորձի բացակայությունը, — բոլորն, անշուշտ, արգելարեթ հանդամանք են հանդիսացել գեղարվեստական աշխատանքը յուր կոչման բարձրության վրա դնելու գործում։

Նկատի ունենալով Հայաստանի աշխատավորության խոշոր պահանջը թատրոնական, յերաժշտական, յերգեցիկ և այլ ձևի գեղարվեստական դաստիարակության գործում անհրաժեշտ պիտի համարել շտապողական միջոցների և ձևերի հայթայթումն ու կիրառումը մեր իրականության մեջ, այն 33 թատերաբեմը և 20 ակումբը, վոր ներկայումս գտնվում են սերիտորիայի վրա, պետք է իրոք դարձվեն աշխատավոր մասսաների գեղարվեստի միջոցով քաղաքական դաստիարակության հիմնարկներ՝ տալով նրանց համապատասխան բովանդակություն և ուղղություն։ Դրառեպգլխվարի աշխատանքները մանրբուրժուական իդեոլոգիայի զարգացման դեպքում ներկայումս, ներկայացումների կինոների և այլ բովանդակության հարցը, համապատասխան գեղարվեստական գրականության ստեղծումը և այլ մի

չարք հարցեր պետք է անպայմանորեն արժանանան քաղլուսվարների ուշադրությանը և ստանան պատշաճ լուծում։

Ի նկատի ունենալով վերոհիշյալ բոլոր հարցերը կոնֆերանսը անհրաժեշտ է համարում կյանքում կիրառել հետևյալ վորոշումները։

I ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԸՆԹԱՑՔՈՎ

1) ա. Համարելով գրառեպվարը միակ որինական և վերահասու մարմինը հանրապետության սահմաններում գրականության, հրատարակչության և ռեպերտուարի վերահսկողության գործում՝ կոնֆերանսը գտնում է անհրաժեշտ բոլոր Գավքաղլուսվարներին կից Գավգրառեպվարների կազմակերպումը անհետաձգելի մի գործ. այլ մարմինների միջնորդությունը ամիջականորեն հիշյալ աշխատանքի մեջ համարել անթույլատրելի և վերջինիս նորմալ և հետևողական աշխատանքը խանգարող հանգամանք։

բ. Խոշոր գավառներում անհրաժեշտ համարել ունենալ գրառեպվարի հատուկ քարտուղար։

գ. Գավգրառեպվարները պարտավորվում են անկախ Գավքաղլուսվարի զեկուցումից ներկայացնել յուրաքանչյուր ամիս հատուկ զեկուցում։

2) Գեղարվեստական դաստիարակության ինչպես և առհասարակ քաղլուսվարական աշխատանքի մեջ թատրոնը համարել մեր պայմաններում լավագույն միջոց։ Ուստի ամեն կերպ աշխատել թատերաբեմերի քանակը հանրապետության սահմաններում ընդլայնելու միաժամանակ ոգտագործել գեղարվեստական դաստիարակության գործում՝ խրճիթ—ընթերցարանները և գյուղակումբները։

3) ա. Նկատի ունենալով քաղլուսվարական ֆինանսական սուղ միջոցները բոլոր գեղարվեստական դաստիարակության հիմնարկները ու կազմակերպությունները (թատրոն, յերգեցիկ խումբ, յերաժշտական խումբ և այլն) ենթակացնել տնտեսական հաշվեառի. Գավքաղլուսվարներին կնքել հատուկ պայմանագրեր գոյություն ունեցող խմբերի հետ և կազմակերպել նոսրերը։

բ. Գավառային կենտրոններում ցանկալի համարել ունենալ որինակելի թատրոններ, վորոնց համար Գավգործկոմների կողմից հատուկ սուբսիդիա գտնելն համարել անհրաժեշտ։

4) Նկատի ունենալով Գեղաշխի միության անմիջական աշխատանքը Գ. Գ. մասսաների գեղարվեստական դաստիարակության և հիշյալ հիմնարկների արտադրության բարձրացման գործում, սահմանել համերաշխ աշխատանք քաղլուսվարների և գեղաշխի միության վարչության հետ. Քաղլուսգլխվարին և Գեղաշխի կենդր. վարչության մշակել հատուկ համաձայնություն այս գործի առթիվ։

II ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1) ա. Կոնֆերանսը անհրաժեշտ է գտնում բոլոր գավառային ակումբներում ունենալ գեղարվեստական սեկցիաներ հետևյալ խմբակներով, գրական, թատերական, յերաժշտական, նկարչական և քանդակագործական.

բ. Գեղարվեստական սեկցիայի խմբակների աշխատանքների մեջ խստորեն հետևել ինքնագործունեության և կոլեկտիվ աշխատանքի սկզբունքին.—

2) ա. Համապատասխան ագիտացիոն և սոցիալական պիեսների բացակայությունը տեղերում առաջացնում է անցանկալի կուլտուրա և հաճախ ժամանակի վոդու և անհամապատասխան պիեսների բեմադրում. տեսկերտուարի մշակման հարցը համարել գեղարվեստական դաստիարակության գործում հարվածային խնդիր։

բ. Գրառեպզլխվարին ամենաշտապ կերպով մատակարարել տեղերին համապատասխան տեսկերտուար դեկավարվելով հետևյալ տեսակետներով՝.

1). Տալ հեղափոխական պիեսներ, վորոնք նկարագրեն հեղափոխական շարժումները Ժողովրդում, Ռուսաստանում և արևմտյան Եվրոպայում.—

2). Տալ սոցիալ-կենցաղային բնույթ կրող պիեսներ, վորոնք նկարագրեն դասակարգային հակասությունները, առանձին սոցիալական խմբավորումների կենցաղը, սովորությունները և իդեոլոգիան և վորոշ սոցիալական նշանակություն ունեցող յերևույթներ՝ կրոն, ազգային հարց և այլն.—

3). Զուտ ագիտացիոն բնույթ կրող պիեսներ, լայն կիրառելով ինսցենիրովկաները խրճիթ-ընթերցարանների համար,—

4). Տալ պիեսներ կապված հեղափոխական տոների հետ.—

5). Տալ կոմեդիաներ, վորոնք լինեն բովանդակալից և ունենան կուլտուրական վորոշ նշանակություն.—

6). Տալ պիեսներ յերեխաների համար։

գ. Ռեպերտուարի հրատարակման համար Քաղլուսգլխվարին հայցել միջոցներ տպագրելու և ցրելու գավառները վերև յելված բովանդակությամբ թարգմանական պիեսներ. միաժամանակ միջոցներ ձեռք առնել ինքնուրույն համապատասխան պիեսներով ռեպերտուարը հարստացնելու, բացի այդ անհրաժեշտ համարել յեղած պիեսների թեթև ու հնարավոր փոփոխությունները՝ հարմարեցնելու ներկա պահանջներին։

դ. Անհրաժեշտ համարել ունենալ խրճիթ-ընթերցարանների, ակումբների և գավառային պրոֆեսիոնալ խմբերի համար հատուկ ռեպերտուարներ.—

յե. Պիեսան. նրա նյութը և գաղափարները հասարակության ավելի հասկանալի դարձնելու նպատակով, սահմանել ներկայացումից առաջ պարտադիր բացատրություն.

3). Ի նկատի ունենալով, վոր ժամանակակից բելլետրիստիկական գրականության մեծ պակասություն է զգացվում մեզանում, կոնֆերանսը անհրաժեշտ է համարում միջոցներ ձեռք առնելու հրատարակելու համապատասխան գրականություն թե օրիգինալ և թե թարգմանական, մոտ ապագայում հրատարակել. «Чтец и декламатор».—

4). Ունենալով հնարավորություն պետական մասնակցության մեջ պահել գեղարվեստական դաստիարակության գործին նպաստող հատուկ հիմնարկներ և կազմակերպություններ, Քաղլուսգլխվարը և նրա տեղական

մարմինները սատնում են կազմակերպչական աշխատանք դեկավարելով զանազան նման ընկերություններ, ինչպես՝ յերաժշտական, գրականագիտական և նկարչական, վերցնելով վերջիններս իր հովանավորության ներքո.—

5). Գրագրատները մեզանում դեռ ևս յենթարկված չլինելով վերջնական զտման, կոնֆերանսը հրահանգում է գրառեպզլխվարին անմիջապես անցնելու այդ աշխատանքին դեկավարելով խստորեն տեղերի աշխատանքը այս ասպարիզում.—

6) ա. Կինո-լուսավորությունը՝ կոնֆերանսը գտնում է խոշորագույն գենք քաղաքական լուսավորության ասպարիզում.—

բ. Մեծ ակնկալություններ ունենալով «Գեոլուսակինոյ» ընկերության անելիքներից կոնֆերանսը հրահանգում է Քաղլուսգլխվարին շտապ կերպով յերևան բերել հիշյալ ընկերության գործունեությունը.—

գ. Նկատի ունենալով այն հանգամանքը, վոր ներկայումս կինոները իրենց նկարներով չեն բավարարում ժամանակի պահանջներին և հաճախ զարթեցնում և զարկ են տալիս վատ բնազդներին և հակումներին, կոնֆերանսը հրահանգում է գրառեպզլխվարին խստիվ հետևել ցուցադրվող կինոնկարներին արգելելով ֆանտաստիկ, ավանտյուրիստական և անբովանդակալից տրյուկային սերիական նկարները —

դ, Անհրաժեշտ համարել գլխավորապես աշակերտության համար ցուցադրել գիտական բնույթ կրող կինո-նկարներ.—

Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.Հ. Публичная Библиотека
7/31. 1922
ՄՈՍԿՎԱ, МОСКВА
Հ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ (Ա.Ս.)

201 3
21172
<< Ազգային գրադարան
NL0054652